ՍԴ1/0011/01/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25 հունիսի 2025 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 17-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2022 թվականի փետրվարի 10-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 90150222 (ՍԴ1/0011/01/22) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Գևորգ Գարեգինի Գևորգյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 375-րդ հոդվածի 4-րդ մասով:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի փետրվարի 14-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Լ.Սեփխանյան) 2022 թվականի մարտի 1-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական գործը դատական քննության նշանակելու մասին:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի ապրիլի 12-ին որոշում է կայացրել քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա.Գաբրիելյան) 2022 թվականի ապրիլի 25-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի մայիսի 10-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական գործը դատական քննության նշանակելու մասին, այնուհետև անցում է կատարել դատաքննության փուլ:

4. 2025 թվականի հունիսի 6-ին թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական վարույթը վերաբաշխվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Հ.Մանուկյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 10-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

4.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 17-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական գործը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունիսի 20-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Նախաքննության մարմնի՝ 2022 թվականի հունվարի 31-ի որոշմամբ Գ.Գևորգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 4-րդ մասով այն բանի համար, որ *«(…) նա հանդիսանալով ՊԲ 46492 զորամասի Դ-20 հրետանային դիվիզիոնի շտաբի պետ-հրամանատարի տեղակալ, կոչումով մայոր, կոչման և պաշտոնի բերումով լինելով նույն դիվիզիոնի ժամկետային և կրտսեր սպայական կազմի ուղղակի պետը, խախտել է ՀՀ ՔՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 73-րդ, 76-րդ հոդվածների և ՀՀ ՔՈՒ հրետանու մարտական կանոնադրության 2-րդ մասի 27-րդ կետի պահանջները, այն է՝ պարտավոր լինելով հավատարիմ լինել զինվորական երդմանը, անձնուրաց կերպով ծառայել իր ժողովրդին, արիաբար, հմտորեն, չխնայելով սեփական արյունը և նույնիսկ կյանքը, պաշտպանել Հայրենիքը, կատարել զինվորական պարտքը, անսասան տանել զինվորական ծառայության դժվարությունները, լինել կարգապահ և խիզախ զինվորական պարտքի կատարման ժամանակ, խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու լինելով իրեն վստահված ստորաբաժանման մշտական մարտական ու զորահավաքային պատրաստականության ստորաբաժանման մարտական խնդիրների հաջող կատարման համար, լինելով դիվիզիոնի շտաբի աշխատանքի անմիջական կազմակերպիչը և անձնական պատասխանատվություն կրելով շտաբին առաջադրված բոլոր խնդիրների կատարման՝ ստորաբաժանումների անընդմեջ ղեկավարումը կազմակերպելու և ապահովելու, կրակի ժամանակին նախապատրաստման և ճշտության, դիվիզիոնի մարտական գործողությունները պլանավորելու, կրակային ստորաբաժանումների տեղափոխվելն ու մարտակարգերի բացազատվելը ղեկավարելու, դիվիզիոնի մարտական գործողությունների համակողմանի ապահովումն անմիջականորեն կազմակերպելու անհրաժեշտության դեպքում դիվիզիոնի կրակի կառավարումն իր վրա վերցնելու ու խափանված ղեկավարման վերականգնումը կազմակերպելու համար, 2020թ. սեպտեմբերի 27-ին թիվ 1586-Ն որոշմամբ ՀՀ կառավարության կողմից հայտարարված ռազմական դրության ժամանակ անձնական շահագրգռվածությունից ելնելով՝ սեփական կյանքը փրկելու նպատակով, դրսևորել*

է իշխանության անգործություն, այն է՝ 2020թ. հոկտեմբերի 12-ին ժամը 18:00-ի սահմաններում Վարանդայի/Ֆիզուլի/ շրջանում գտնվող «Ջուվաղլու» կոչվող տեղամասում մարտական գործողություններին մասնակցելու ընթացքում հակառակորդի զինված խմբի կողմից կրակային դիրքի ձախակողմյան հատվածում տեղակայված նույն դիվիզիոնի 1-ին մարտկոցի անձնակազմի ուղղությամբ գրոհ ձեռնարկելուց և տարբեր զինատեսակներից կրակոցներ արձակելուց անմիջապես հետո ենթակա անձնակազմին օգնության հասնելու ինքնապաշտպանությունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վերջիններիս տարհանումը կազմակերպելու, ստորաբաժանման անընդմեջ ղեկավարումը կազմակերպելու և ապահովելու, ենթականերին իրավիճակից բխող խնդիրներ առաջադրելու փոխարեն ԳԱՋ33081 մակնիշի ՊԲՏ013 զինհամարանիշի ավտոմեքենայով՝ առանց հետամուտ լինելու անգամ տվյալ մեքենայի անձնակազմի նստեցումը կազմակերպելու գործընթացում, փախուստի է դիմել կրակային դիրքից, որպիսի գործողություններն առաջացրել են նյութական ծանր հետևանքներ՝ առանց պատշաճ ղեկավարման մնացած 1-ին մարտկոցի անձնակազմը խուճապի է մատնվել, փորձել է հնարավոր միջոցներով և եղանակներով պաշտպանվել, սակայն հրամանատարական ղեկավարման բացակայության պայմաններում դա չի հաջողվել, համակարգված մարտական գործողություններ վարելու և միասնական ղեկավարման բացակայության հետևանքով զոհվել են նույն դիվիզիոնի 1-ին մարտկոցի 20 զինծառայողներ՝ պահեստազորայիններ Նվեր Էդուարդի Ավանեսյանը, Վահե Սերգեի Ավագյանը, Վաչագան Գարիկի Հարությունյանը, Կարեն Բորիսի Դանիելյանը, Նաիրի Գրիգորի Բաղդասարյանը, ժամկետային զինծառայողներ Գեորգի Արմենի Բալայանը, Սամվել Արթուրի Ղազարյանը, Արթուր Արմենի Ասրյանը, Լևոն Միհերի Գրիգորյանը, Դավիթ Լևոնի Ազատյանը, Արտյոմ Արտակի Տեփանյանը, Ռուբեն Արսենի Պողոսյանը, Նարեկ Արմենի Օհանյանը, Արտակ Ջիվանի Միքայելյանը, Հայկ Միհերի Պապիկյանը, Վահե Արթուրի Պապյանը, Հայկ Հովհաննեսի Անտոնյանը, Գոռ Գևորգի Ափանոսյանը, Սամվել Ստեփանի Պողոսյանը, Հայկ Սարգսի Մելիքյանը: (…)»[1]*:*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթեր 193-195:

7. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով տուժողների իրավահաջորդների ներկայացուցչի միջնորդությունը, 2022 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Մինչ դատաքննության անցնելը դատական նիստի նախապատրաստական փուլում Լ.Սիմոնյանը և դատական նիստին ներկայացած տուժողների իրավահաջորդները միջնորդությունը պնդեցին և խնդրեցին գործի ընդդատությունը փոխել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածով սահմանված կանոնների կիրառմամբ:*

Մեղադրող Կ.Ղազարյանը չառարկեց ներկայացված միջնորդության դեմ:

Պաշտպան Գ.Գևորգյանը նույնպես չառարկեց միջնորդության դեմ, հավելեց, որ միջնորդությունը հիմնավոր է և միանում է ներկայացված միջնորդությանը:

Ամբաստանյալ Գ.Գևորգյանը հայտնեց, որ համաձայն է սույն գործի ընդդատությունը փոխելուն:

(…)

Սույն գործի նյութերից երևում է, որ քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը՝ դատակոչված 19 տուժողի իրավահաջորդներից 6-ը բնակվում են Երևան քաղաքում, 6-ը Երևան քաղաքի շրջակա տարածքներում, բացի այդ, դատակոչված 23 վկաներից 12-ը բնակվում են Երևան քաղաքին հարակից տարածքներում, այսինքն դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի դատական տարածքին մոտ գտնվող մարզերում:

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ սույն գործով ամբաստանյալը ներկայումս գտնվում է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Դատական նիստի ընթացքում վերջինս հայտնեց, որ համաձայն է և ցանկանում է, որ գործի տարածքային ընդդատությունը փոխվի և գործն ուղարկվի Երևան քաղաքի առաջին ատյանի դատարան:

Այսպիսով, Դատարանն արձանագրում է, որ սույն գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս, մեղադրյալը տվել է տարածքային ընդդատության փոփոխման համաձայնություն, դատաքննությունը

դեռևս չի սկսվել, ընդդատությունը փոխելով չի տուժի արդարադատության շահը, ավելին՝ կապահովվի ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքն, ինչն այս դեպքում առավել առաջնային է, քանի որ ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց է ընտրված կալանավորումը:

Վերոգրյալի հաշվառմամբ և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածում առկա իրավակարգավորումները, Դատարանը գտնում է, որ սույն քրեական գործի տարածքային ընդդատությունը պետք է փոխել և քրեական գործն ըստ մեղադրանքի Գևորգ Գարեգինի Գևորգյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 4-րդ մասով, ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ և 313-րդ հոդվածներով, Դատարանը (…)»[2]*:*

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 17-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործի ուսումնասիրության արդյունքում հարկ է փաստել, որ թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական գործով ներգրավված թվով 19 տուժողներից միայն 9 անձ է բնակվում Երևան քաղաքում, իսկ 10 անձ բնակվում է Երևան քաղաքից դուրս (ընդ որում՝ տարածքային ընդդատությունը փոխելու մասին որոշման կայացման պահի դրությամբ միայն 6 տուժող է բնակվել Երևան քաղաքում), տուժողի ներկայացուցիչը և պաշտպաններից մեկը բնակվում են Երևան քաղաքում, մյուս պաշտպանը՝ Երևան քաղաքից դուրս, մեղադրյալը գտնվում է քրեակատարողական հիմնարկում, իսկ թվով 23 վկաներից որևէ մեկը չի բնակվում Երևան քաղաքում: Այսինքն՝ ստացվում է, որ սույն քրեական գործով ներգրավված են քրեական դատավարությանը մասնակցող 46 անձ (23 դատավարության մասնակից և 23 վկա), որոնցից միայն 11 անձ է բնակվում Երևան քաղաքի տարածքում, իսկ 35 անձ բնակվում է Երևան քաղաքի տարածքից դուրս:*

Մինչդեռ, 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 7, թերթեր 324-328:

համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս:

Այսինքն՝ տվյալ իրավանորմի ուսումնասիրությունից կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները՝

- քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս,

- տարածքային ընդդատության փոփոխման համաձայնություն են տվել բոլոր մեղադրյալները:

Այլ կերպ, Դատարանի գնահատմամբ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու մասին ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 12-ի որոշման ինչպես կայացման պահի դրությամբ, այնպես էլ ներկայում դատավարության մասնակիցների և վկաների մեծամասնության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանի դատական տարածքում բնակվելու պայմանը բացակայում է: Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ Երևան քաղաքի տարածքից դուրս, թեկուզև Երևան քաղաքին մոտ մարզում բնակվելու հանգամանքը չի կարող նույնանալ և դիտարկվել որպես Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանի դատական տարածքում բնակվելու պայմանի առկայություն: Հակառակ դեպքում քրեական գործը կարող էր ուղարկվել ցանկացած այլ դատարան:

(…)

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ սույն քրեական գործի քննությունը որոշակի ժամանակահատված իրականացվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում և ընդդատությունը որոշելու համար վարույթն ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելը կարող է հանգեցնել գործի քննության ձգձգումների, ապա նախ հարկ է նշել, որ ցանկացած պարագայում, եթե վարույթի քննությունն իրականացվի սխալ ընդդատության պայմաններում, ապա կվտանգվի կայացված դատական ակտը: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ միայն այս պատճառաբանությամբ վարույթի քննությունը հնարավոր սխալ ընդդատությամբ իրականացնելը չի կարող

իրավաչափ համարվել: Ավելին՝ հակառակ պարագայում երկարատև քննությունը կարող է ապարդյուն համարվել, եթե այդ ողջ քննությունն իրականացված լինի ընդդատության խախտմամբ: Բացի այդ էլ, այս առումով հատկանշական է այն հանգամանքը, որ սույն վարույթի դատական քննությունը միևնույնն է պետք է սկսվի ի սկզբանե՝ անկախ այն հանգամանքից, թե որ դատարանի կողմից է այն քննության առնվելու: Այլ խոսքով, ստացվում է, որ ընդդատության հետ կապված ցանկացած որոշման կայացման դեպքում դատական վարույթն սկսվելու է ի սկզբանե, ուստի վարույթի հնարավոր ձգձգման հանգամանքը չի կարող նման պայմաններում ողջամիտ հակափաստարկ համարվել և որևէ կերպով ազդել այս հարցի քննության վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում ընդդատության կանոնի կիրառմանը, ուստի գտնում է, որ հարկ է թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական գործով ընդդատությունը որոշելու համար վարույթն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին:

Ղեկավարվելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության 41-րդ, 47-51-րդ հոդվածներով (…)»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 22-րդ մասը, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ սույն ընդդատության հարցը լուծելիս ընթացակարգային առումով կիրառելի է 2022 թվականի հուլիսի 1-ից գործող կարգը: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ առաջին ատյանի դատարանները որոշումներ կայացնելիս ղեկավարվել են 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներով, ուստի առաջին ատյանի դատարանների հետևությունների իրավաչափության գնահատման համար հիմք են ընդունվում հիշյալ օրենսգրքի դրույթները:

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 11, թերթեր 27-38:

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը,*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

14. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- տվյալ քրեական վարույթը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել 2022 թվականի փետրվարին 10-ին: Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2022 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ, ղեկավարվելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով դատավարության մասնակիցների դիրքորոշումները և փաստելով, որ քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս, ինչպես նաև այն, որ մեղադրյալն իր համաձայնությունն է հայտնել գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, որոշում է կայացրել քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

Սյունիքի մարզի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է նաև, որ տարածքային ընդդատությունը փոխելով չի տուժի նաև արդարադատության շահը, ավելին՝ կապահովվի քրեական գործը ողջամիտ ժամկետում քննության առնելու սկզբունքը[7]:

- Սույն քրեական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է 2022 թվականի ապրիլի 21-ին, և 2022 թվականի ապրիլի 25-ին ընդունվել է վարույթ: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի մայիսի 10-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական գործը դատական քննության նշանակելու մասին, այնուհետև անցում է կատարել դատաքննության փուլ, որից հետո 2025 թվականի հունիսի 6-ին քրեական վարույթը վերաբաշխվել է:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 17-ին որոշում է կայացրել քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին, փաստելով, որ ինչպես Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 2022 թվականի ապրիլի 12-ի որոշման կայացման պահի դրությամբ, այնպես էլ ներկայում, 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ

[7] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է[8]:

16. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական գործի տարածքային ընդդատությունը մեղադրյալի համաձայնությամբ փոխել և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է փոխանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման կայացման պահին սույն գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվել են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս[9]: Իսկ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի կարգավորման համաձայն՝ տարածքային ընդդատությունը կարող էր փոխվել քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերի՝ տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս բնակվելու դեպքում:

Միաժամանակ, հաշվի առնելով սույն գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանց բնակության վայրերը, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն գործի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը բխել է նաև արդարադատության շահից:

17. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում արձանագրել, որ սույն վարույթով **առերևույթ առկա է դատական**

---

[8] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերը:

շրջապտույտի, գործի ողջամիտ ժամկետում քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտման վտանգ, հաշվի առնելով, որ սույն քրեական գործը **2022 թվականի փետրվարից գտնվում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում, սակայն մինչ օրս գործի քննությունը գտնվում է նախնական դատալսումների փուլում:**

18. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

20. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ՍԴ1/0011/01/22 վարույթը պետք է ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՍԴ1/0011/01/22 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ